



Մկրտիչ Մինասի Խանգադյանը ծնվել է 1923թ-ին՝ Սպիտակի շրջանի Լուսաղբյուր գյուղում: 1941թ. հունիսի 20-ին ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցի տասներորդ դասարանը: 1941թ. հունիսի 22-ին սկսված պատերազմը ճակատագրական եղավ ինչպես ամբողջ ժողովրդի, այնպես էլ պատանի Խանգադյանի համար: 1942թ. հունվարին նա զորակոչվեց և ծառայությունը բանակում տևեց մինչև 1947թ. ապրիլը: 1942թ. դեկտեմբերի 1-ին, 409-րդ հայկական դիվիզիայի կազմում մեկնեց ռազմաճակատ: Կարճ ժամանակ անց նա հայտնվեց 413-րդ հրաձգային դիվիզիայի 982-րդ հրետանային գնդում՝ որպես տեղանքագրող-հաշվարկող զինվոր: Մինչև պատերազմի ավարտը ու դրանից հետո էլ նա մնաց այդ զորամասում: Պատերազմի հաղթական ավարտը նրանց զորամասը նշանավորեց Բալթիկ ծովի ափին գտնվող գերմանական Ցինգստ քաղաքի գրավումով: Գնահատելով նրա անձնուրաց ծառայությունը՝ հրամանատարության առաջադրությամբ արժանացավ «Կարմիր աստղ», «Խիզախության համար» երկու մեդալների և այլ պարգևների: Նրան հանձնվեց նաև գերագույն գլխավոր հրամանատարի յոթ շնորհակալագրերը և «Հայրենական պատերազմի» շքանշան : Զորացրվելուց հետո վերադարձավ տուն, ապա ընդունվեց և ավարտեց Հայկական Մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը: Աշխատանքի անցնելով հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում՝ նշանակվեց այդ նույն դպրոցի տնօրեն: 1963թ. ընտանիքով տեղափոխվելով Կոտայքի շրջան՝ սկզբում աշխատեց Արզնիի գիշերօթիկ դպրոցում՝ որպես ուսնասվար, ապա ստանձնեց Գեղաշենի միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնը: 1990թ. անցել է կենսաթոշակի: Կենսաթոշակի անցնելուց հետո հեղինակել է 2 գիրք՝ «Իմ հայրենի գյուղը՝ Փամբակի Լուսաղբյուրը» և «Հիշողություններ վառողահամ խրամատներից»: Հեղինակն է բազմաթիվ գիտական հոդվածների և բանաստեղծությունների, որոնք տպագրվել են հանրապետական մամուլում: Այժմ էլ իր իննսունամյակի նախօրյակին, դեռ առույգ է, աշխույժ, մասնակցում է համայնքի հասարակական աշխատանքներին և հանդիսանում է իր մեծ գերդաստանի նահապետը: